



## Սիրելի հայրենակիցներ,

Ամառնային արձակուրդներէն կազդուրուած ու վերանորոգուած, մեծ թափով լծուած ենք մեր առօրեայ աշխատանքին եւ «Լրատու»ն, ըստ սովորութեան, կը ներկայանայ վերամուտեան նոր հրատարակութեամբ մը: Գաղութը սովորական կերպով կը շարունակէ իր երթը, Նարեկ Զայկական Վարժարանները Սեպտեմբերի կիսուն լայն բացին իրենց դռները, մեծ ուրախութեամբ ընդունելով մեր երեխաները, իսկ Նանօր Զայկական Մանկական Կեդրոնը, իր տաքուկ գիրկին մէջ սրտաբաց հիւրընկալեց մեր մանուկներն ու փոքրիկները:

Վստահ եմ, տեղեակ էք, թէ Զամահայկական Ամառնային 6-րդ խաղերուն, որոնք տեղի ունեցան 2-13 Օգոստոս 2015-ին Զայաստանի մէջ, Կիպրոսի մարզիկները արձանագրեցին մեծ յաջողութիւններ: Մարի Սոմաքեան-Եորդիու ապահովեց 2 ոսկի, 3 արծաթ եւ 1 պրոնզ մետալներ, լողի տարբեր տեսակի ոճերու մէջ, Ճիմ Լիվի 1 ոսկի՝ կուժի, իսկ Արմանտօ Արխիմանտրիտիս՝ 1 արծաթ հեծելարշաւի մէջ: Նշենք, թէ Կիպրոսի նման փոքր գաղութի մը արձանագրած արդիւնքները, քաջալերական են ու մեծ գոհունակութիւն պարգեւեցին կազմակերպողներուն, միեւնոյն ժամանակ պատիւ բերելով մեր գաղութին: Որպէս Պետական Ներկայացուցիչ, իմ կարգիս, հպարտ կը զգամ որ անձամբ ներկայ գտնուեցայ Զամահայկական խաղերուն եւ կարողացայ առաւելագոյն կերպով օգտակար հանդիսանալ գաղութի այն միասնական նախաձեռնութեան իրականացման, շօշափելի նիւթական օժանդակութիւն ապահովելով մասնակից մարզիկներուն:

Ուրախ եմ նաեւ, որ Նարեկ Յայկական Վարժարաններու 20 շրջանաւարտները, որոնք երկու ուսուցչուհիներու ընկերակցութեամբ Յայաստան այցելած էին 19 Յուլիսէն 2 Օգոստոս, մասնակցելու «Արի Տուն» ծրագիրին, յիշարժան տպաւորութիւններով վերադարձան Կիպրոս:

Ուրախութեամբ կ'ուզեմ յիշել, թէ այս տարի ամառուայ արձակուրդս ամբողջութեամբ անցուցի Յայաստանի ու Արցախի մէջ եւ անմոռանալի յիշատակներով եւ բարձր տրամադրութիւններով վերադարձայ Կիպրոս:

Գալով մեր կղզիին եւ ակնարկ մը նետելով տնտեսական կացութեան վրայ, կը նշմարենք, թէ բնակչութենէն շօշափելի խաւ մը տակաւին կը շարունակէ պայքարիլ ամէնօրեայ իր ապրուստը ապահովելու համար, իսկ անգործութեան տոկոսը կը մնայ բարձր, հակառակ այն իրողութեան, որ վերջերս, Եւրոգօտիի Տնտեսական Նախարարներու ժողովին, Կիպրոսի տնտեսութեան պատշաճեցման կամ առողջացման ծրագիրը «յաջողած» յայտարարուեցաւ:

Ինչ կը վերաբերի Կիպրական հիմնահարցին առնչութեամբ բանազնացներու եւ առաջնորդներու մակարդակով տարուող հապճեպ բանակցութիւններուն, որոնք քանի մը ամսուայ ընդմիջումէն ետք լուրջ եւ արագացուած ձեւով կը յառաջանան, «գուսպ լաւատեսութիւն» կը ներշնչեն: Առաջին անգամ ըլլալով, Կիպրական հարցը շատ մօտ կը թուի ըլլալ յարատեւող ու արդար լուծումի մը շեմին, հիմնուած երկ-շրջանային, երկ-համայնքային դաշնակցութեամբ, մէկ հպատակութեամբ եւ մէկ գերիշխանութեամբ: Այժմ, երկու կողմերու առաջնորդները կը քննեն ամենաբարդ կետերէն սեփականատիրութեան եւ հողատարածքներու հարցերը: Յաջորդող երեք ամիսները չափազանց կարեւոր կը համարուին Կիպրական հարցին լուծում մը գտնելու ջանքերուն մէջ եւ յոյսով ենք, որ ամէն ինչ հեզասահ կ'ընթանայ եւ մինչեւ տարեվերջ կը սպասուի որ պիտի բիրեղանայ Կիպ-

րական հարցի լուծման կարելիությունը:

Իսկ Կիպրոսի Տնտեսական Առանձնաշնորհեալ Գօտիէն ներս բնական կազի յայտնաբերման շօշափելի պաշարներու առկայութեան եւ ուժանիւթային ոլորտէն ներս անոր ունեցած ռազմաքաղաքական եւ տնտեսական կարելորութեան առնչութեամբ, կրնամ ըսել թէ այս իրականութիւնը կրնայ բարեփոխել մեր շրջանի կացութիւնը: Ինչպէս շատեր կը հաստատեն, Կիպրոսը կրնայ հանդիսանալ Արեւելեան Միջերկրականի մէջ խաղաղութեան եւ կայունութեան գրաւականներէն մէկը: Բնական կազի յաւելեալ որոնումները կը շարունակուին, իսկ վերջերս Եգիպտոսի տնտեսական Առանձնաշնորհեալ Գօտիէն ներս լայնածաւալ պաշարներու յայտնաբերումը, նոր լոյս կը սփռէ այն ենթադրութեան վրայ, թէ Կիպրոսի ջուրերուն մէջ գտնուող բնական կազի պաշարները՝ ակնկալուածէն աւելի կրնան ըլլալ: Զետեւաբար, ժամանակը ցոյց պիտի տայ, թէ որքանով այս բոլորը ճշմարտութեան պիտի համապատասխանեն:

Նախքան խօսքիս աւարտը, պարտք կը զգամ յիշեցնելու, թէ 22 եւ 23 Զոկտեմբերին, Պաֆոսի «Palia Elektriki» Cultural Centre-ի եւ Նիկոսիոյ «Փալլաս» սրահներուն մէջ, յաջորդաբար, տեղի պիտի ունենան Կիպրոսի Սիմֆոնիք նուագախումբին ելոյթները՝ նուիրուած Զայկական Ցեղասպանութեան 100-ամեակին, ղեկավարութեամբ կիպրահայ տաղանդաշատ խմբավար Զայկ Իւթիւժեանի: Յայտագիրի մէջ ընդգրկուած են նաեւ Կոմիտաս Վարդապետի յօրինումները: Առ այդ՝ բոլորէն կը սպասուի խուռներամ ներկայութեամբ սատար հանդիսանալ այս զոյգ ելոյթներու յաջողութեան:

**Վարդէն Մահտեսեան**

**Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

### Հպատակութիւն

2015 տարուան երրորդ եռամսեակին, 3 անհատներ եւ եռանդամ ընտանիք մը, որոնք երկար տարիներ Լիմասոլ եւ Նիկոսիա օրինաւոր բնակութիւն հաստատած էին, ստացան կիպրական հպատակութիւն:

### Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ

Ուրբաթ, 3 Յուլիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Յունաստանի նորանշանակ դեսպան Պրմ. Իլիաս Ֆոտոպուլոսի հետ:

Երկուշաբթի, 6 Յուլիս 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Պրմ. Եաննակիս Օմիրուի կազմակերպած՝ «Կիպրոս՝ ազգային, քաղաքական, տնտեսական մարտահրաւերներու խաչմերուկին» միւթով հաւաք-ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Cleopatra պանդոկի սրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան:

Չորեքշաբթի, 8 Յուլիս 2015-ին, Պետական Ներկայացուցիչը յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցաւ Կիպրոսի երկու համայնքներու Առեւտուրի եւ ճարտարարւեստի Վերահսկիչ Պալատներու կազմակերպած «Կիպրոսի տնտեսութեան մեր տեսլականը՝ լուծումէն ետք» միացեալ ձեռնարկին, որու ընթացքին խօսք առաւ Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիս եւ թուրք կիպրացի ղեկավար Մուսթաֆա Աքընճը: Ձեռնարկը տեղի ունեցաւ Chateau Status-ի մէջ, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

Չորեքշաբթի, 15 Յուլիս 2015-ին, Պետական Ներկայա-

ցուցիչը ներկայ գտնուեցաւ Խորհրդարանի յատուկ նիստին՝ նուիրուած թրքական ներխուժման 41-րդ սել տարեդարձին, նախագահութեամբ Ներկայացուցիչներու Տան նախագահ Եաննակիս Օմիրուլի եւ ներկայութեամբ Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Նիկոս Անաստասիատիսի:

**Նարեկ Հայկական Վարժարաններու 2015**

**տարեշրջանի շրջանաւարտներուն Հայաստան այց**

Կիրակի, 19 Յուլիս 2015-ին, վեցերորդ յաջորդական տարին ըլլալով, Նարեկ Հայկական Վարժարաններու 20 շրջանաւարտները, ընկերակցութեամբ երկու ուսուցչուհի-



ներու՝ երեցկին Թամար Հապէշեանի եւ Պանտելիցա Հաճիպաւլի Միքելիտիի, երկու շաբթուան համար Հայաստան մեկնեցան: Ըստ աւանդութեան, այս շրջապտոյտը Պրն.

Մահտեսեանին նուէրն էր շրջանաւարտներուն, որ ամէն տարի կ'իրականանայ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագրի ծիրէն ներս:

Նշենք, թէ խումբը յիշարժան ու ուրախ օրեր անցուցած էր, շրջելով Հայաստանի գեղատեսիլ ու պատմական վայրերը եւ իսկապէս գոհացած ու անմոռանալի յիշատակներով վերադարձաւ Կիպրոս, բարձր գնահատելով Սփիւռքի Նախարարութեան բժախնդիր ծրագրումն ու կազմակերպուածութիւնը:

### **Կիպրահայ գաղութի կեանքէն**

Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2015-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ Աղլանճայի քաղաքապետին կողմէ յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Աղլանճա քաղաքի փառատօնին, որու ընթացքին հիւրաբար ելոյթ ունեցաւ Համազգայինի «Սիփան» պարախումբը, հմայելով ներկաները:

Կիրակի, 27 Սեպտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչն ու տիկինը, ներկայ գտնուեցան Լիմասոլի Ս. Գէորգ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղօրհնութեան, հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Նարեկ Արքեպիսկոպոսի:

Հինգշաբթի, 30 Սեպտեմբեր 2015-ին, Պետական Ներկայացուցիչն ու տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ռոթարեան Ակումբի միջ-համայնքային բարեսիրական հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, որու ընթացքին ելոյթ ունեցաւ Համազգայինի «Սիփան» պարախումբը, մեծապէս հրապուրելով հանդիսատեսները:

## Պարգևատրում



Ուրբաթ, 14 Օգոստոս 2015-ին, Պետական Ներկայացուցիչ Վարդգես Մահտեսեան ամառնային արձակուրդին առիթով Հայաստան գտնուած ժամանակամիջոցին, անակնկալօրէն հրաւիրուելով Ազգային ժողով, Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանի ձեռամբ պարգևատրուեցաւ ՀՀ Ազգային ժողովի նախագահի Մետալով, 2 Ապրիլ 2015-ին, Կիպրոսի Խորհրդարանէն ներս Ցեղասպանութիւններու ժխտումը քրեականացնող օրէնքին ընդունման առնչութեամբ տարած իր յաջող աշխատանքին համար:



Իսկ Երեքշաբթի, 18 Օգոստոս 2015-ին, Պրն. Մահտեսեան Արցախ այցելութեան ընթացքին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի կողմէ պարգեւատրուեցաւ Ղարաբաղեան Շարժումի Յուշամետալով, իր ցուցաբերած յարատեւ աջակցութեան համար:

### **Շնորհաւորագիր**

24 Յուլիս 2015 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր շնորհաւորութիւնները յղեց Տիար Վարդան Թաշճեանին, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Ոսկի Մետալ»ին արժանանալուն ուրախ առիթով: Ան, Պրն. Թաշճեանին քաջառողջութիւն եւ բարօր կեանք մաղթեց շարունակելու իր ծառայութիւնները մատուցել ազգային-հասարակական կեանքի



ծաւալման եւ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման աշխատանքներուն մէջ:

1 Օգոստոս 2015 թուակիր գիրով մը, Պրն. Վարդգէս Մահտեսեան իր ու կիպրահայութեան անունով շնորհաւորեց Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ Տէր Գրիգոր-Պետրոս Ի. նորընտիր Պատրիարքը, անոր մաղթելով արդիւնաւետ ծառայութիւն:

31 Օգոստոս 2015 թուակիր նամակներով, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց կիպրահայութիւնը ներկայացնող մարզիկներ՝ Մարի Սոմաքեան Եորդիուն, Ճիմ Լիվին եւ Արմանտո Արխիմանտրիտիսը, Օգոստոս 2015-ին, Հայաստանի մէջ կայացած Համահայկական 6-րդ խաղերուն իրենց մասնակցութեան եւ արձանագրած յաջողութիւններուն համար, մաղթելով անոնց նորանոր յաջողութիւններ:

Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2015-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 24-րդ տարեդարձին առիթով, անհատական շնորհաւորագիրներ յղեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեանին, Սփիւռքի նախարար Տիկին Հրանուշ Յակոբեանին, Ազգային Ժողովի նախագահ Տիար Գալուստ Սահակեանին եւ Յունաստանի ու Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանին, մաղթելով որ յաջորդող տարիները մեր Հայրենիքի, Լեռնային Ղարաբաղի եւ համայն հայութեան համար ըլլան անկիւնադարձային՝ տնտեսական եւ քաղաքական առումներով:

**«ՆԱՆՕՐ»****Հայկական Մանկական Կեդրոն**

2015-2016 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները աւարտած ըլլալով կը փափաքինք տեղեկացնել հետաքրքրուող ծնողներուն, թէ «ՆԱՆՕՐ»ի 2-էն մինչեւ 3 տարեկան երեխաներու բաժանմունքին մէջ տակաւին կան քանի մը տեղեր:

**Յաւելեալ**

տեղեկութիւններու/մանրամասնութիւններու համար կրնաք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով 97808414, ժամը 8:30-էն մինչեւ 14:30:

**Վարչական Խորհուրդ  
«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական  
Կեդրոնի**

**«ՆԱՆՕՐ»****Մանկապատանեկան Պարախուճ**

Հաճոյքով կը փոխանցենք, թէ Հայկական Պարի դասընթացքները 6-12 տարեկան փոքրիկներուն համար պիտի վերսկսին

**Շաբաթ, 10 Հոկտեմբեր 2015-ին,**  
ժամը 11:30-13:00, Նիկոսիոյ Նարեկ  
Վարժարանի նոր սրահէն ներս,  
ղեկավարութեամբ պարուսոյց  
Պրն. Գօգօ Քելէշեանի:

Արձանագրութեան համար կը խնդրուի բոլոր ծնողներէն անխտիր, իրենց զաւակներուն ընկերակցութեամբ ներկայանալ Նարեկ Վարժարանի սրահը, նոյն օր ժամը 11:15-ին:

**Երեսփոխանական Գրասենեակ**

Թարմացնելու համար «Լրատու»ի  
 հասցեացանկը, Կիպրահայ գաղութի  
 անդամներին եւ մեր  
 հայրենակիցներին կը խնդրուի կապ  
 հաստատել Երեսփոխանական  
 Գրասենեակին հետ հեռաձայնելով  
 22454540 թիւին, ճշդելու համար  
 քնակարաններու հասցէները եւ կամ  
 տեղեակ պահելու այլ  
 փոփոխութիւններու մասին:

*Շնորհակալութիւն*

## ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
 Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
 Ել. Հասցէ office@armenianmp.com  
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
 Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy